Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Պ-937[1]-07.10.2024,28.11.2024-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գովազդի մասին» 1996 թվականի ապրիլի 30-ի ՀՕ-55 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 14-րդ հոդվածի 2-րդ մասում «ալկոհոլային խմիչքների» բառերից հետո լրացնել «եւ էներգետիկ ըմպելիքների» բառերը:

Հոդված 2. Օրենքի 15-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 1.1.-ին մասով.

«1.1. Էներգետիկ ըմպելիքների գովազդի դեպքերում արգելվում է՝

ա) ներշնչել, որ էներգետիկ ըմպելիքն ունի բուժական, խթանող, հանգստացնող եւ լարվածությունը թուլացնող հատկություններ.

բ) դրդել սպառողներին էներգետիկ ըմպելիքի օգտագործմանը, բացասական գնահատական տալ չափավոր օգտագործմանը կամ չօգտագործմանը.

գ) ստեղծել այնպիսի տպավորություն, որ էներգետիկ ըմպելիքները օգտագործում են սպորտային մրցումներին մասնակցելու եւ հաջողության հասնելու, առողջության պահպանման կամ բարելավման նպատակով ուժային գործողություններ իրականացնելիս կամ դրանց մասնակցությունից հետո ծարավը հագեցնելու համար.

դ) չզգուշացնել էներգետիկ ըմպելիքների չափից ավելի օգտագործման բացասական հետեւանքների մասին՝ սույն մասի «ը» կետով սահմանված տեքստի տեղադրմամբ կամ հնչեցմամբ:

ե) ներշնչել, որ էներգետիկ ըմպելիքներն օգտագործելն էական է բարետես կազմվածք ձեռք բերելու, հասարակական հաջողության հասնելու կամ գրավչություն ստանալու համար.

զ) ստեղծել այնպիսի տպավորություն, որ էներգետիկ ըմպելիքները օգտագործում են ալկոհոլային խմիչքների հետ համատեղ.

է) նկարահանել եւ պատկերել 25 տարեկանից ցածր տարիք ունեցող անձանց:

ը) այն գովազդը, որի ժամանակ չի նշվում՝ «խորհուրդ չի տրվում օգտագործել մինչեւ 18 տարեկան երեխաներին, հղիության եւ կրծքով կերակրելու ժամանակ, ինչպես նաեւ նյարդային բարձր գրգռվածությամբ, անքնությամբ, զարկերակային բարձր ճնշմամբ տառապող անձանց: Այդ տեղեկատվությունը պետք է լինի հստակ եւ ընթեռնելի:»:

2) 3-րդ մասում «ալկոհոլային խմիչքների» բառերից հետո լրացնել «եւ էներգետիկ ըմպելիքների» բառերը:

3) 4-րդ մասում «ալկոհոլային խմիչքների» բառերից հետո լրացնել «եւ էներգետիկ ըմպելիքների» բառերը:

4) 5-րդ մասի «բ» կետում «ծավալային միավոր)» բառերից հետո լրացնել «եւ էներգետիկ ըմպելիքների» բառերը:

5) 5.1.-ին մասի «բ» կետում «ալկոհոլային խմիչքների» բառերից հետո լրացնել «եւ էներգետիկ ըմպելիքների» բառերը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

ՏԵՂԵԿԱՆՔ

Փոփոխվող հոդվածի վերաբերյալ

Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Պ-937[1]-07.10.2024,28.11.2024-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գովազդի մասին» 1996 թվականի ապրիլի 30-ի ՀՕ-55 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 14-րդ հոդվածի 2-րդ մասում «ալկոհոլային խմիչքների» բառերից հետո լրացնել «եւ էներգետիկ ըմպելիքների» բառերը:

Հոդված 2. Օրենքի 15-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 1.1.-ին մասով.

«1.1. Էներգետիկ ըմպելիքների գովազդի դեպքերում արգելվում է՝

ա) ներշնչել, որ էներգետիկ ըմպելիքն ունի բուժական, խթանող, հանգստացնող եւ լարվածությունը թուլացնող հատկություններ.

բ) դրդել սպառողներին էներգետիկ ըմպելիքի օգտագործմանը, բացասական գնահատական տալ չափավոր օգտագործմանը կամ չօգտագործմանը.

գ) ստեղծել այնպիսի տպավորություն, որ էներգետիկ ըմպելիքները օգտագործում են սպորտային մրցումներին մասնակցելու եւ հաջողության հասնելու, առողջության պահպանման կամ բարելավման նպատակով ուժային գործողություններ իրականացնելիս կամ դրանց մասնակցությունից հետո ծարավը հագեցնելու համար.

դ) չզգուշացնել էներգետիկ ըմպելիքների չափից ավելի օգտագործման բացասական հետեւանքների մասին՝ սույն մասի «ը» կետով սահմանված տեքստի տեղադրմամբ կամ հնչեցմամբ:

ե) ներշնչել, որ էներգետիկ ըմպելիքներն օգտագործելն էական է բարետես կազմվածք ձեռք բերելու, հասարակական հաջողության հասնելու կամ գրավչություն ստանալու համար.

զ) ստեղծել այնպիսի տպավորություն, որ էներգետիկ ըմպելիքները օգտագործում են ալկոհոլային խմիչքների հետ համատեղ.

է) նկարահանել եւ պատկերել 25 տարեկանից ցածր տարիք ունեցող անձանց:

ը) այն գովազդը, որի ժամանակ չի նշվում՝ «~~արգելվում է օգտագործել մինչեւ 18 տարեկան երեխաներին,~~ խորհուրդ չի տրվում օգտագործել մինչև 18 տարեկան երեխաներին, հղիության եւ կրծքով կերակրելու ժամանակ, ինչպես նաեւ նյարդային բարձր գրգռվածությամբ, անքնությամբ, զարկերակային բարձր ճնշմամբ տառապող անձանց: Այդ տեղեկատվությունը պետք է լինի հստակ եւ ընթեռնելի:»:

2) 3-րդ մասում «ալկոհոլային խմիչքների» բառերից հետո լրացնել «եւ էներգետիկ ըմպելիքների» բառերը:

3) 4-րդ մասում «ալկոհոլային խմիչքների» բառերից հետո լրացնել «եւ էներգետիկ ըմպելիքների» բառերը:

4) 5-րդ մասի «բ» կետում «ծավալային միավոր)» բառերից հետո լրացնել «եւ էներգետիկ ըմպելիքների» բառերը:

5) 5.1.-ին մասի «բ» կետում «ալկոհոլային խմիչքների» բառերից հետո լրացնել «եւ էներգետիկ ըմպելիքների» բառերը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ Պ-937-07.10.2024,28.11.2024-ՏՀ-011/1 ԵՎ ԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	**ՀՀ կառավարություն**	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետ	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետում առաջարկում ենք «երկրորդ մասում «երեքհարյուրապատիկի չափով:» բառերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մաս.» բառերը փոխարինել «երկրորդ մասից հետո լրացնել նոր մաս՝ հետևյալ բովանդակությամբ» բառերով՝ ինկորպորացիայի արդյունքում խնդիրներից խուսափելու նպատակով:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

2.	**Պատգամավոր՝ Ալխաս Ղազարյան**	«Գովազդի մասին օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի ը) ենթակետ	Նախագծի 2-դ հոդվածի 1-ին մասի ը) ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «ը) այն գովազդը, որի ժամանակ չի նշվում՝ «խորհուրդ չի տրվում օգտագործել մինչեւ 18 տարեկան երեխաներին, հղիության եւ կրծքով կերակրելու ժամանակ, ինչպես նաեւ նյարդային բարձր գրգռվածությամբ, անքնությամբ, զարկերակային բարձր ճնշմամբ տառապող անձանց: Այդ տեղեկատվությունը պետք է լինի հստակ եւ ընթեռնելի:»:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: